



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



✓

# ԿԱՐՈՑ

ԿԱՄ

ՍՄԵՐԻԿԵԱՆ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ

ՊԱՍԸՐՄԱՆԻ ԵՒ ՄՕՆԴԻ

ԳՈՐԾՄԱՆԷՆ

ՈՐ Ի ՄԱՆՀԱՅՄ



ՀԱՄԱՌՕՑ ՊԱՅՄՈՒԹԻՒՆ


ԿԱՐՈՑԻ ԳԻՏԻՆ

ԵՒ ԻՐԵՆ ԳՈՐԾՄԾՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ



Յ. Մ. Վ. ՔԷՅԼԸՐԻ ՄԹԵՐԱՏՈՒՆԸ

ԲԵՐԱ ԼԻՆԱՐՏԻ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

ՖԻՆԱՆՏԸՐԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ, ԹԻԻ 19

— 1868 —

674490 64






Handwritten text in cursive script, oriented upside down. The text is difficult to decipher but appears to contain several lines of information, possibly a name and a date or location.

4362

4219

ՏԵՏ. ԳՐԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ԹԱՆԳԱՐԱՆ

04  
30  
40  
50  
60  
70  
80  
90




Lith. Centrales, Péra.

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԻՆ

---

- A Ծիծեռնիկը լծելու համար կազմած :
- a Բուժակ , որուն վրայ դերձանը անգամ մը այնպէս դարձուներու է , որ վար հոսելու ժամանակ ետեւի անուակին քսուելով տակը դանուած (b) ծակէն անցնի :
- B Կարը մեծցուներու կամ պղտիկցուներու համար պտուտակ :
- C Զապանակ (d) մոյժը վար կոխելու համար :
- D Լծակ , տակը լաժ մը դներու կամ անկէ վերցուներու ժամանակ (d) մոյժը վեր վերցուներու համար :
- E Ասեղը հաստատելու համար պտուտակ :
- F Գոյլ , որով ակիշը կ'շարժի :
- G Կանոն , պէտք եղած տեղը կարելու լաժը ուղիղ դիրքի մէջ բռնելու համար :

# ԲԱՌԱՐԱՆ




Ակիշ. Չէնկէլ:  
 Անիւ. Չարդ:  
 Անուակ. Պզտիկ չարդ:  
 Առածգահան. Երջլը:  
 Բուժակ. Քէմանի բանլիքի ձե-  
 ւով շինուած կտոր մ'է:  
 Բոյլ. Սամա քիլիտի ձեւով  
 կտոր մ'է:  
 Զեռեղէլ. Եէրլէշիքիմէք:  
 Զինուորական դործատուն. Զի-  
 նուորներու պէտք եղած բաներ  
 շինող ֆապրիգա:  
 Զապանակ. Զէմպէրէկ, Էայ:  
 Լիսեռ. Աղբըշադի ձեւով մե-  
 տաղ մ'է:  
 Լծակ. Մոյթը վեր վերցունելու  
 կոթ:  
 Լօիլ. Քաղաք Հիւսիսային Ամե-  
 րիկայի մէջ:  
 Խոռոչ. Գովուդ, չուգուր:  
 Միծեանիկ. Մադարա:  
 Միծեանիկը լծել. Մադարան  
 անցունել:  
 Կազմած. Թաղրմ:  
 Կազապար. Գալըպ, մօտէլ:  
 Կանոն. Ճէտվէլ:  
 Կարոց. Կարելու մեքենայ:  
 Չեռնակիր. Չեռքով տարուող:  
 Ճերմակեղէն. Լուացուելու ձեր-  
 մակ լաթեր:

Մայր. Ախտա սօմունու:  
 Մեղմիկ. Եալաշճաճըդ:  
 Մոյթ. Պաքի ձեւով կտոր մ'է:  
 Նեա. Օդ:  
 Շնորհագիր. Փաթէնթ: Այս  
 գրուած թուղթը Տէրութենէն  
 կ'արուի այն արհեստաւորին,  
 որուն շինած դործը ուրիշ մը  
 չ'համարձակիր շինելու մինչեւ  
 որ թղթին ժամանակակէտը լը-  
 բանայ:  
 Պարաթել. Օձաձեւ սլորած մե-  
 տաղէ թել:  
 Պղնայար. Կունակի ոսկր:  
 Ռսկրի իւղ. Չիու ոսկրէ հանուած  
 տեսակ մը եղ է:  
 Պտղըն. Քաղաք Հիւսիսային Ա-  
 մերիկայի մէջ:  
 Պտուտակ. Ախտա:  
 Պրկէլ. Կէրկիլէմէք:  
 Պրկում. Կէրկիլէք:  
 Սիլէնար. Քաղաք Հիւսիսային Ա-  
 մերիկայի մէջ:  
 Փանդ. Անգղիական լիբա:  
 Իոշի. Թօղ:  
 Բէմպրիճ. Քաղաք Հիւսիսային  
 Ամերիկայի մէջ:  
 Բեղիք. Երկայն բարակ երկաթ  
 մը որուն վրայ ճիծեանիկը կը  
 դառնայ:







ԵՂԻԱ ՀԱՌԻ

ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ԲԱՐԵՐԱՐ ԿԱՆԱՆՅ



Կանանց համար չ'կայ այնչափ հետաքրքրական անձ մը, որուն յիշատակը դարէ 'ի դար անըինջ մնայ, ինչպէս Եղիա Հանու, կարոցին հնարողը, որ իրեն ճարտարագիւտ մեքենայով կանանց վրայէն անտանելի տանջանք մը, մեծ հող մը վերցունելով նոր դարագլուխ մը կազմեց :

Քիչ ժամանակի մէջ հազարաւոր կարոցներ աշխարհիս ամեն կողմը տարածուեցան . և բացի արանց և կանանց գլխարկներէն ամեն տեսակ հանդերձ կրնան այս մեքենայով կարուիլ : Թէ քարակ և թէ հաստ լաթերը, այն մինչեւ անդամ կաշիներ և կօշիկներ կրնան կարուիլ ասով :

Արդէն միլիոնաւոր ոտքի ամաններ , կօշիկներ , ձեռնոցներ և ուրիշ կաշիէ հանդերձներ կարուեցան ասով : Ամերիկայի պատերազմին ժամանակ , ուր որ յանկարծակի մեծամեծ պատրաստութեանց կարօտ եղան զօրքերը , Պլէյք անուն մեքենագործին մէկ կարողով օրը 150 զոյգ ոտքի աման կ'կարուէին . և այժմ գինուորական գործարանաց մէջ երկաթէ դերձակներ կ'բանին :

Ո՛ւր թողունք սովորական կերպով (առանց կարողի) կարելէն յառաջ եկած փաստակար հետեւութիւնները : Մատղաշ աղջիկներն դպրոցէն կ'ելնեն չ'են ելներ ուսման մնաս բարով ըսելով անմիջապէս կարին գլուխը կ'անցնին և կ'սկսին աչքի լոյս թափել . քիչ ժամանակէն ընդհանուր տկարութիւն մը , կուրծքի նեղութիւն և ստամոքսի ծանրութիւն , ջղային տկարութիւն և ողնայարի ծռութիւն օրիորդը կերպարանափոխ կ'ընեն , և ողորմելին միայն գերեզմանին դուռը կրնայ ասոնցմէ ազատիլ : Այս տխուր վիճակը գոնէ առատաձեռն փոխարինութիւն մը ունենա՛ր : Ոչ . ընդհակառակն շատ տարիներէ ի վեր կարողներէն քիչերը հազիւ թէ ապրուստ մը կ'ունենան , իսկ շատերն ալ շատ անգամ անօթի կ'մնան : Քաջ

շապիկ կարող մը հազիւ թէ շաբաթի մը մէջ  
3 մէծիտիյէ կ'շահի . զինուորական ճերմակեղէն  
կարող ընտանիքէ կ'լսենք , թէ օրն ի բուն  
հազիւ հազ չորս շապիկ կարելով 4 դահե-  
կան կ'շահի մէկը : Ուրեմն քանի՛ դոհու թեան ,  
քանի՛ փառաց և պարծանաց արժանի է Եղիա  
Հանու , որուն կարողը ամբողջ օրուան մը Բեյ-  
էլ տասը վայրկենի մէջ մարգարտի պէս  
դուրս կ'հանէ : Այսպիսի արժանայիշատակ  
անձ մը կ'ուզենք քիչ մը ճանչցունել :

Եղիա Հանու ծնաւ 1819 ի Սփէնսը , Մէսէ-  
չուսէթս տէրութեան մէջ . իր հայրն էր Չա-  
ղացպան և միանգամայն պանդոկապետ : Ինքը  
արդէն մեքենական գիտութեան միտում ցու-  
ցնելով՝ 16 տարեկան հասակին Լօիլի մէջ մե-  
քենայի գործատուն մը մտաւ , ուր մինչեւ  
1837 անխոնջ կ'աշխատէր : Նոյն տարին , որն  
որ Հիւսիսային Ամերիկայի համար ձախորդ  
տարի մ'էր , Հանու շատերուն պէս անգործ  
մնալով՝ ֆէմպրիճ գնաց իրեն ապրուստ ճա-  
րելու , ուր տեղ քիչ մը ժամանակ կենալէն  
ետքը Պոսդըն եկաւ և ամուսնանալով երկու  
որդի ունեցաւ : Բայց այս տեղ ալ գործը ան-  
յաջող երթալով սկսաւ իր կինը կար կարելով  
ապրուստ ճարել :

Ահա այս տեղ յղացաւ իր միտքը մեքենայով կարելու այն հրաշալի գիւտը, որուն կատարելագործութեան և կաղապարի մը կազմութեան իր բոլոր ազատ ժամանակները նուիրելով՝ 1841 ին այսպիսի կաղապար մը շինեց լմնցուց, որուն համար շնորհագիր մը ընկալաւ : Բայց իր հայրենակից գերձակներուն անհաշտելի թշնամութենէն ստիպեալ Անգղիա գնաց, ուր նոյնպէս շնորհագիր մը ընկալաւ, և սկսան այս տեղ ալ թշնամութիւններ դէմ ելնել. ուստի իր շինած կաղապարը Թովմաս անուն Անգղիացիի մը 250 փաւնդի վաճառելով՝ սրտաբեկ Ամերիկայ դարձաւ և մեծ զարմանքով տեսաւ որ ընկերութիւն մը կազմուեր և իր հնարած մեքենան սկսեր է վաճառել : Այս յանգուգն գողութեան դէմ չը համբերելով քանի մը հարուստ անձերէ օգնութիւն գտած՝ ընկերութիւնը դադրեցուց և շնորհագրի իրաւունքը իրեն պահեց :

Վերջապէս բարեյաջողութիւն մը ուրախացուց զինքը. բազմաթիւ կարօցներ շինուելով Ամերիկայի ամեն կողմը, նոյնպէս Անգղիա, Գաղղիա, Գերմանիա, Ռուսաստան եւ այլն խրկուեցան : Թէ եւ սկիզբները քիչ շահ ունէր, սակայն հետզհետէ աճելով տարեկան

չահը մինչեւ 175000 տոլլարի հասաւ , որ կ'ընէ  
948500 ֆրանկ : Բախտ մը որ գիւտ գանող  
ներէն քիչերուն կ'պատահի : Արդ Ե. Հանու  
փառաւոր տուն մը կանգնեց և առջի տրամու  
թեան և դրկողութեան պատուհները առատա  
պէս վայելեց այժմ . բայց երջանկութեամբ  
զինքը անգործութեան չ'տուաւ , այլ Ամերի  
կայի պատերազմին ժամանակը հասարակ զին  
ուորի համազգեստ հագնելով զինքը հայրեն  
եաց պաշտպանութեան նուիրեց . և ինչ բարիք  
որ ինք վայելեր , նոյնը կ'վայելէին դասակից  
զինուորներն իր ծախքովը :

Հանու մեռաւ անցեալ տարի 21 Սեպտ .  
ճիշդ այն ժամանակ , երբ իր շնորհազրի ժա  
մանակակէսը լրանալու մօտ էր , խաղաղու  
թեամբ իր Նոր Եորքի մօտ Պրուքլինի մէջ  
գտնուած գեղաշէն տանը մէջ , որոյ յիշատակն  
օրհնութեամբ եղիցի կանանց աշխարհին մէջ :

Հիմակուան ընտիր գործատուներէ ելած  
կարողներէն ոմանք ճերմակեղէնի համար մեծ  
արժէք ունին , ոմանք բրդեղէններու , այլք  
ալ կաշեղէններու համար : Մենք թողլով միւս  
տեսակներուն վրայ խօսիլը այն ժամանակին

երբ որ անգամ մը այս մեքենան ազգերնուս  
մէջ ընդհանրանայ, կ'խօսինք այժմ սպիտակե-  
ղէնի կարողին վրայ, որն որ իր պարզութեան,  
դիւրին գործածութեան և խիստ աժան գնոյն  
համար պէտք է թէ հարստին և թէ աղքատին  
տանը հարկաւոր կարասիներէն մէկն ըլլալ:

Փոքր Ա.Գրեկեան յեռնակի կարոցը նոր ժամա-  
նակներս վերջի աստիճանի կատարելագոր-  
ծուելով տան մը համար պէտք եղած գրեթէ  
բոլոր կարերը կրնայ կարել. իր գործածու-  
թեան կերպը այնչափ դիւրին է որ ո եւ իցէ  
մէկը քառորդի մը մէջ կրնայ սովրիլ. իր թե-  
թեւութեամբ այցելու թեան ժամանակ ալ կրը-  
նայ տնէ ի տուն ի միասին տարուիլ. ամենա-  
բարակ լաթեղէնէն սկսեալ մինչեւ խիստ հաստ  
լաթեղէնները հաւասար դիւրութեամբ և կար-  
գաւորութեամբ կրնայ կարել: Իր գործածու-  
թեան կերպը հետեւեալն է:

Թիւ 3



## ԿԱՐՈՑԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ



Նոր սովրել սկսող մը մեքենային վրայ կարել չ'սկսած աղէկ կ'ընէ, թէ որ հետեւեալ գործածութեան կերպը մէկիկ մէկիկ հասկընալով կարդայ և կարդացածը բաղդատէ, թէ արդեօք ծախու առած մեքենային վրայ ամեն թէութիւնները կատարելապէս կ'տեսնուին : Այս ընելով քիչ ժամանակէն այնպիսի յաջողակութիւն մը կ'ստանայ որ այնուհետեւ այս նախապատրաստութեան կարօտութիւն չ'ունենար :

### 1. ԿԱՐՈՑԸ ԶԵՏԵՂԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Մեքենան իրեն պտուտակովը ծանրաշարժ սեղանի մը վրայ այնպէս հաստատէ որ անիւը աջակողմի և ասեղը ձախակողմի ըլլայ, ինչպէս որ տետրակիս մէջի պատկերը կ'ցուցնէ :

### 2. ԱՍԵՂԸ ԴՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Մեր ծախած կարոցներուն բոլորին վրայ ալ պատրաստ ասեղ մը և քիչ մը կարուած լաթի կտոր մը կայ : Նոր սկսող մը մինակ անիւը պատկերին վրայ նետով նշանակուած

կողմը դարձունելով կրնայ կարը յառաջ տանել :  
Նոր սկսողներէն կ'խնդրեմք որ ասեղը իր տե-  
ղէն ամենեւին չ'շարժեն . և մեքենային վրայի  
լաթին հաստութեամբ կտոր մը լաթ այնչափ  
կարեն , մինչեւ որ լաթը շխտակ ասեղին տակը  
քշելով կարելու կարող ըլլան և մեքենան ա-  
ռանց դժուարութեան դորժածել գիտնան :

— Բայց թէ որ աւելի բարակ կամ հաստ լաթ  
մը բարակ կամ հաստ ասեղդերձանով կարել  
ուզուի , կամ թէ խիստ նոր սկսողի մը անհո-  
գութեամբ ասեղը կտորի , այն ժամանակ ու-  
րիչ նոր ասեղ մը դնելու է հետեւեալ կերպով :

Ասեղը կարողին վրայէն հանելու համար Ե  
պտուտակը թուլցունելու և ասեղը զգուշու-  
թեամբ հանելու է որ չ'ծռմուկի կամ չ'կտորի :  
Նոյնպէս նոր ասեղ մը դնելու ժամանակ նայ-  
ելու է որ ասեղին խոռոչը (ասեղին մէկ կողմը  
վերէն ի վար վտար) քու ձախակողմից , այսինքն  
դերձանին կախուած կողմը և քիչ մ'ալ դէպ  
ի դիմացի կողմը դառնայ , ուր որ կարուած  
լաթը կարողին տակէն կերթայ . և կարելի ե-  
ղածին չափ ասեղը իր տեղը ներսուկ խոթե-  
լով հաստատելու է : Ասեղներուն հասարկ կողմը  
թուանշաններ կան . դեղեցիկ կար կար կարե-  
լու համար այս թուանշանները դերձանին



հաստութեան յարմար դալու են, ինչպէս որ վարը պիտի ցուցնենք .

20 էն մինչեւ 40 թիւ դերձանի համար 3 թիւ ասեղ . 40 էն մինչեւ 60 թիւ դերձանի համար 2 թիւ ասեղ . 60 էն մինչեւ 80 թիւ դերձանի համար 1 թիւ ասեղ . 80 էն աւելի թիւ դերձանի համար 0 թիւ ասեղ :

Ստոնք սովորականներն են . ասոնցմէ աւելի բարակ կամ հաստ լաթեղէն կարելու համար աւելի բարակ կամ աւելի հաստ ասեղներ կրնան շինուիլ, թէ որ ապսպրուի :

### 3. ԾԻԾԵՌՆԻԿԸ ԱՆՑՈՒՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Ծիծեռնիկը անցունելու համար երկու մայրերը, ոլորաթելը և լիսեռը մէկդի առնելու և ծիծեռնիկը այնպէս անցունելու է որ դերձանը դէպի ձախ կողմը քակուի . յետոյ մէկդի առած լիսեռը նորէն այնպէս անցունելու է, որ ծիծեռնիկը իր երկու կողմի լիսեռներուն վրայ հաստատուի . յետոյ ոլորաթելը անցունելու է, որն որ լիսեռը հրելու համար է . և վերջապէս երկու մայրերը . առաջին մայրին դուրսը ոլորաթելին կողմը դառնալու է, երկրորդինը անոր հակառակ կողմը, որով երկու մայրերն

ալ ծիծեռնիկին դարձած ժամանակ անշարժ  
կ'մնան :

4. ԴԵՐՁԱՆԸ ԱՆՅՈՒՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Ծիծեռնիկէն քակուող դերձանը ձ բու-  
թակին վրայ անգամ մը այնպէս փաթթելու է  
որ դերձանը վար վազած ժամանակ բութա-  
կին քովի փոքր անուակին քսուելով տակը  
դանուած Ե ծակէն անցնի , որպէս զի ետքը  
ասեղին ծակին մէջ ձախէն դէպ ի աջ անցուի :

5. ԴԵՐՁԱՆԸ ՊՐԿԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Դերձանը պրկելը խիստ հարկաւոր բան  
մ'է , որն որ կարելու սկսելէն առաջ դիտել  
պէտք է : Ինչպէս որ ձեռքով կարելու ժամա-  
նակ ամեն մէկ ըէջէն՝ լաթին և դերձանին  
բարակութեան կամ հաստութեան համեմատ  
ուժով կամ մեղմիկ պրկելու է , նոյնպէս ալ  
պէտք է որ կարոցին դերձանին պրկումը ըլ-  
լայ : Յայտնի է որ կարի մը գեղեցկութիւնը ,  
դիմացկունութիւնն ու կանոնաւորութիւնը դեր-  
ձանին պրկումէն կախում ունի : — Թէ որ կա-  
րոցին դերձանը պէտք եղածէն աւելի թոյլ  
ըլլայ , կարուած լաթին տակը ոլորներ կ'դոյ-

Handwritten notes and signatures at the bottom of the page.

անան և մինչեւ անդամ ծուխկ ծուխկ կ'ըլ-  
լան և գործն ալ յառաջ չ'երթար . իսկ թէ որ  
դերձանը խիստ պրկած է , կարելու ժամանակ  
անմիջապէս կ'փրթի : Ուրեմն դերձանին պըր-  
կումը չ'փրթելու չափ պինդ ըլլալու է :

Գերձանին պրկումը կամ թուլցունելը ու-  
րիշ բանով չ'ըլլար , բայց եթէ ծիծեռնիկին  
ծայրի մայրերը քեղիքին վրայ ներս դուրս  
դարձունելով : Գերձանը ձ բութակին վրայ ան-  
դամ մը փաթթելը իրեն պրկումը առածգա-  
կան ընելու համար է : Խիստ բարակ լաթի  
համար , որոնք խիստ բարակ դերձան ալ կ'ու-  
ղեն , բութակին վրայ փաթթել պէտք չէ .  
բայց անոր տեղը պրկումը քիչ մը աւելցունե-  
լու է : Զանազան լաթերու զանազան խստու-  
թեամբ պրկելը գիտնալու համար քիչ մը վար-  
ժութիւն բաւական է :

6. ԼԱԹԸ ԱՍԵՂԻՆ ՏԱԿԸ ԲԵՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Լաթը ասեղին տակը բերելու համար Ս  
լծակը դէպ ի ծիծեռնիկին կողմը վեր հրելու  
և անիւը նետով նշանակուած կողմը քիչ մը  
դարձունելու է , մինչեւ որ ասեղը աղէկ մը վեր  
ելնէ . յետոյ լաթը ձ մոյթին տակ քշելու և

լծակը դարձեալ առջի տեղը բերելու է, որ  
պէս զի մոյթը լաթին վրայ կոխէ :

7. ԽՈՇՈՐ ԿԱՄ ՄԱՆՐ ԿԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Թէ որ B պտուտակը աջակողմ դարձուի՝  
կարը խոշոր կըլլայ . իսկ թէ որ ձախակողմը  
դարձուի՝ մանր կըլլայ . բայց այս դարձունելը  
թէ որ չափէն աւելի ըլլայ, կրնայ ըլլալ որ մե-  
քենան աւրուի . ուստի պտուտակը միայն դա-  
նակի բերնի չափ աջ կամ ձախ դարձունելու  
է խոշոր կամ մանր կար հանելու համար :

8. ԿԱՆՈՆԸ ՇՏԿԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Կանոնը կարուելու լաթին եղերքին դէմ  
դնելով՝ կարը շիտակ ըլլալու համար կ'ծա-  
ռայէ . իրեն վրայի երկան բարակ ճեղքը կա-  
րին մօտ կամ անկէ հեռու հաստատելու հա-  
մար է :

*Ս. Ա. Ն. Օ. Թ. Ռ. Թ. Ի. Ի. Ն. Ք.*  
ՄԱՆՈԹՈՒԹԻԻՆՔ

Ա. կարոցին չ'մնասելու, դերձանը չ'փրրթ-  
ցրնելու և ասեղը չ'կոտրելու համար մասնաւո-  
րապէս կ'յորդորենք որ լաթին թանձր տեղերը  
մեղմիկ կարուի . և թէ որ կարելը դժուար ըլ-

լայ, բուն անիւր բունելով դարձուի, փոխա-  
նակ կոթէն բունել դարձունելու, ինչպէս որ  
սովորաբար ընելու է: Վերջապէս մեծ շքանքներ  
մեծնային միշտ զնասակար է: Լմնցած կարի մը դեր-  
ձանը քիչ մը երկայնկեկ թողելու է որ ետքը  
ձեռքի ասեղով ծայրը կարուի և կապուի. ա-  
սոր պէս ալ ամեն տեղ, ուր որ դերձանը կրտ-  
րել պէտք է:

Բ. Կարոցը իւղել: Ը զսպանակին ծայրը և F  
դոյլը միշտ լաւ մը իւղելու է որ չոր մնալով  
չ'մաշին: Ասոր համար սակրի իւղը ամենէն  
յարմար է: Կարոցին մնացած բոլոր տեղերը,  
ուր որ երկու երկաթ իրար կ'քսուին, երբեմն  
երբեմն իւղելու է, որպէս զի մեքենային ա-  
մեն մէկ մասունքը ազատ և դիւրաւ շարժին:  
Թէ որ կարոցը օրն ի բուն աշխատի, երկու  
ժամը անդամ մը իւղել պէտք է:

Գ. Կարոցը մաքրել: Կարոցը միշտ լաւ վիճակի  
մէջ պահելու համար ամեն մէկ աշխատութենէ  
ետքը լաթով մը զգուշութեամբ բոլոր փոշին  
մէկգլի ընելով մաքրելու է: Բայց մեքենան  
քակելը մնասակար և անօգուտ է, որովհետեւ  
մեծ դժուարութեամբ նորէն տեղը կ'անցուի:

Դ. Մենէ առնուած կարոցներուն ածենն ալ փորձուած  
և կտրարելապէս անարատ են, որուն համար երաշխաստոր կ'ըն-

ԼճԻ՝ թէ որ մէկը տետրակին մէջի կանոններուն համեմատ գործածէ զայն, երկար ժամանակ կ'դիմանայ և հարիւրապատիկ կ'վարձատրէ: Իսկ թէ որ պակասութիւն մը ըլլայ, յայտնի է որ յանցանքը կարողին քովս է, ոչ թէ կարոցին. ուստի այս պակասութեանը համար աւելի աղէկ կարողի մը կամ մեքենան ծախողին խորհուրդ հարցունելու է:





ԿԱՐՈՑԻ ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱՐԵՐԵԱՆ ԲՈՆԵՐՈՒՆ ԳԻՆԸ

	Լեւոյ
Պարզ կարոց, անտրակիս մէջի պատկերին նման.	5 1/2
Քիչ մը մեծ, « Թագուհի » կոչուած.	4
Կրկնաթել կարոց, որուն կարը երբէք չ'քակուիր.	6 1/2
Կարոցի սեղան և ոտքով դարձունելու պատուանդան.	2 1/2
Կարոցի պատուանդան ոտքով դարձունելու.	3/4

Թէ որ մէկը ուղէ կարոցը ոտքով դարձունել, կրնայ այս վերջի երկուքէն մէկը ծախու առնել:

Կարոցի դերձան. ծիծեռնիկը 60 փարսյ:

Կարոցի ասեղ. հասար 2 դահեկան:

Ամեն մէկ կարոցի հետ մէկտեղ ձրիարար 4 ասեղ կ'արուին:

Կարոցի խղ. մէկ շէշը 4 1/2 դահեկան:

Խղաման. հասար 7 »

Վերի դրուածները կը ծախուին,

ԲԵՐԱ. Գաղղիական Թաարոնին դիմացով Լեւոյրի փողոցը 3. Մ. Վ. Քէօլրբին տունը, թիւ 15: Ղալաթա սարային քով Ասլանեան Եղբարցիան: Թը, թիւ 257:

ՍՏԱՄՊՈԼ. Թէրզի պաշի փողոցը Ելիպցի դերձակ Սարգիս աղային խանութը, թիւ 55: